

ՏԵՂԵԿԱԼՔ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և նրա ստորաբաժանումների կողմից 2018 թվականի առաջին կիսամյակում զգալի աշխատանք է կատարվել համակարգի առջև ծառայած խնդիրների ու գործառնությունների իրականացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում միջոցներ են ձեռնարկվել համակարգի սոցիալ-տնտեսական զարգացման, գործունեության բարեփոխման, օպտիմալացման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման ուղղությամբ:

Շարունակվել է գործունեությունը ԱՀ օրենսդրության կատարելագործման և իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ:

Գործուն և սիստեմատիկ բնույթ է կրել համակարգի ստորաբաժանումների գործունեության նկատմամբ տարվող հսկողությունը, դրա կազմակերպչական և մեթոդական կառավարումը, պրակտիկ օգնության ցուցաբերումն ու ստուգումների իրականացումը, վերահանված թերությունների և բացթողումների քննարկումն ու դրանց վերացման համար համապատասխան միջոցների կիրառումը:

2018 թվականի առաջին կիսամյակում նախարարն այցելել է Հաղրութի, Մարտունու, Շուշիի, Մարտակերտի, Շահումյանի, Սսկերանի, Քաշաթաղի շրջանների և Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանումներ, որտեղ հանդիպել է ստորաբաժանումների ղեկավարներին, ծանոթացել առկա խնդիրներին ու տվել անհրաժեշտ ցուցումներ:

2018 թվականի հունվարի 26-ին տեղի է ունեցել նախարարի՝ 2017 թվականի նախարարության գործունեությանը և 2018 թվականին նախատեսվող աշխատանքներին նվիրված մամուլի ասուլիսը: Նախարարը պատասխանել է լրագրողների կողմից հնչեցված բազմաթիվ հարցերին, ներկայացրել Արցախի Հանրապետության Սահմանադրությունից և ԱՀ Նախագահի ծրագրից բխող՝ օրենսդրական դաշտում ու նախարարության ստորաբաժանումներում իրականացված և նախատեսվելիք աշխատանքները:

2018 թվականի հունվար-փետրվար ամիսներում նախարարը անց է կացրել հարցազրույցներ «tert.am» էլեկտրոնային պարբերականի, «Ապառաժ» թերթի և Արցախի հանրային հեռուստատեսության լրագրողների հետ՝ ներկայացրել սահմանադրական բարեփոխումների և ԱՀ արդարադատության նախարարության աշխատանքային գործունեության մասին, պարզաբանել լրագրողների կողմից հնչեցված այլ հարցեր:

2018 թվականի փետրվարի 12-ին նախարարը մասնակցել է Հաղրութում կայացած դարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված միջոցառումներին:

2018 թվականի փետրվարի 28-ին նախարարը մասնակցել է Ազգային ժողովի 7-րդ նստաշրջանի առաջին լիագումար նիստին:

2018 թվականի մարտի 29-ին նախարարը մասնակցել է ԱՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդի հերթական նիստին:

2018 թվականի մարտ ամսում նախարարի կողմից տրվել են մի շարք հանձնարարականներ՝ նախարարության կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների որակի բարելավման, տեղեկատվական դաշտում հանրային իրազեկվածության բարձրացման, Հանրապետության Նախագահի ծրագրից բխող՝ ոլորտում իրականացվող միջոցառումների ընթացքի և նախարարության ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի համալրման վերաբերյալ:

2018 թվականի ապրիլի 5-ին նախարարը մասնակցել է ԱՀ պետական նախարարի մոտ տեղի ունեցած խորհրդակցությանը:

2018 թվականի ապրիլի 19-ին նախարարը մասնակցել է ԱՀ Ազգային ժողովի հերթական լիազույմար նիստին:

2018 թվականի ապրիլ ամսում նախարարը գործուղվել է ք. Երևան, աշխատանքային հանդիպումներ ունեցել ՀՀ սահմանադրական դատարանում:

2018 թվականի մայիսի 7-ին նախարարը այցելել է ԱՀ պետական սահմանին մարտական հերթապահություն իրականացնող N գորամաս, շնորհավորել զինծառայողներին գալիք տոնի առթիվ:

2018 թվականի մայիսի 17-ին նախարարի նախագահությամբ նախարարությունում տեղի է ունեցել որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի նիստ, որի արդյունքում օտարերկրյա քաղաքացու կողմից ԼՂՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու նպատակով, լիազոր մարմնի կողմից կենտրոնացված հաշվառման կանգնելու դիմումին՝ հանրապետական հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

2018 թվականի մայիսի 31-ին նախարարը, որպես կառավարության լիազոր ներկայացուցիչ մասնակցել է ԱՀ Ազգային ժողովի հերթական լիազույմար նիստին, ներկայացրել «Դատախազության մասին» Արցախի Հանրապետության օրինագիծը:

2018 թվականի հունիսի 27-ին նախարարը, որպես կառավարության լիազոր ներկայացուցիչ մասնակցել է ԱՀ Ազգային ժողովի հերթական լիազույմար նիստին, ներկայացրել «Հավաքների ազատության մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և մի շարք այլ Արցախի Հանրապետության օրենքների նախագծեր:

Նախարարության և նրա մեջ ընդգրկված ստորաբաժանումների կողմից 2018 թվականի առաջին կիսամյակում հոգուտ պետական բյուջեի գանձվել է 52.935.300 դրամ:

Նախարարության համակարգում ընդգրկված ստորաբաժանումների գործունեությունն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

1. Նախարարությունում ստացված փաստաթղթերի շրջանառության, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման ոլորտ

Արդյունքները: Հաշվետու ժամանակաշրջանում Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունում ընդհանուր թվով մուտքագրվել են 3529 նամակներ, դիմում-գրություններ, որոնցից 2053-ը՝ պետական մարմիններից և նախարարության տարածքային ստորաբաժանումներից, 1453-ը՝ տարբեր հասարակական կազմակերպություններից, անհատ ձեռնարկատերերից, աշխատակազմի աշխատակիցներից (կազմակերպչական բնույթի), իսկ 35-ը՝ քաղաքացիների կողմից:

2018 թվականի առաջին կիսամյակում արդարադատության նախարարի մոտ կազմակերպվել է թվով 69 քաղաքացիների ընդունելություն՝ նրանց ցուցաբերելով իրավական օգնություն:

Համակարգի գործունեությունը կազմակերպելու և կանոնակարգելու նպատակով՝ արձանագրվել են նախարարի 77 և աշխատակազմի ղեկավարի 72 հրամաններ:

1. Թափուր պաշտոնների վերաբերյալ հայտարարությունները.

«Ազատ Արցախ» թերթին է առաքվել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնի և աշխատակազմի իրավական տեղեկատվական համակարգի բաժնի առաջին կարգի մասնագետների թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին համապատասխան հայտարարությունները:

2. Թղթակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հետ.

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանն ու հաստատմանն են առաքվել ԱՀ արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների նոր անվանացանկը և համապատասխան պաշտոնների անձնագրերը:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ է ուղարկվել 2018 թվականի մարտի 1-ի դրությամբ ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի նոր նշանակված և գրանցամատյանում ընդգրկված քաղաքացիական ծառայողների հաշվառման տվյալների փոփոխությունների մասին (Ձև N7) և քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատված քաղաքացիական ծառայողների մասին (Ձև N9) տեղեկությունները:

2018 թվականի մարտ ամսում կազմվել ու ԼՂՀ ՔԾԽ է ներկայացվել աշխատակազմի 2018 թվականին վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների տարեկան հայտը և վերապատրաստման ծրագրերը, իսկ հուլիս ամսում արդեն՝ ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ և «Մեսրոպ Մաշտոց» համալսարան են ուղարկվել վերապատրաստվողների վերջնական հայտերը:

«Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում կատարված փոփոխությամբ պայմանավորված, ԼՂՀ ՔԾԽ են ուղարկվել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության փոփոխված պաշտոնների անձնագրերի հաստատված օրինակների պատճենները:

Աշխատանքներ են տարվել աշխատակիցների անձնական գործերում առկա վերգիրների (Ձև N5) լրացման, ինչպես նաև անձնական գործերի ստուգման ու փաստաթղթերի համակարգման ուղղությամբ:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն՝ համակարգվել և աշխատակազմի ղեկավարի գնահատմանն են ներկայացվել աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց 2017 թվականի երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքային գործունեության վերաբերյալ հաշվետվությունները:

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ է առաքվել ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ատեստավորման ենթակա գլխավոր պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների ատեստավորման անցկացման վերաբերյալ պահանջվող համապատասխան փաստաթղթերը:

2. Իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման ոլորտ

Արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման ոլորտում նախագծվել են թվով 35 օրենսդրական ակտեր:

ԱՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Հավաքների ազատության մասին», ««Արտակարգ դրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Հասարակական կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Արհեստակցական միությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Կուսակցությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Ազգային անվտանգության մարմինների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Զինվորական ծառայություն անցնելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Երեխայի իրավունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N608-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 16-ի N235-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 26-ի N462 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը:

Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդին են ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել են «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը: Նախագծերի ուսումնասիրության արդյունքում սահմանադրական բարեփոխումների

համակարգման խորհրդին ներկայացվել են մի շարք առաջարկություններ, որոնք հիմնականում ընդունվել են:

Նշված ժամանակահատվածում ուսումնասիրվել է ԱՀ Գերագույն դատարանի նախագահ Ն. Նարիմանյանի՝ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թվականի կոնվենցիան վավերացնելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու մասին գրությունը:

Ուսումնասիրվել են նաև Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հ. Զիվանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», Ա. Առստամյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», Ժ. Գալստյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», Ա. Առստամյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և պատգամավորներ Ռ. Մնացականյանի և Ռ. Դադայանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնց արդյունքում ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հետ համատեղ մշակվել և Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն ու պետական գրանցմանն է ներկայացվել «Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառման ենթակա համատիրության կազմում ընդգրկված բազմաբնակարան շենքերի վերաբերյալ տեղեկությունների կազմը սահմանելու մասին» գերատեսչական նորմատիվ իրավական ակտը:

3. Իրավական ակտերի պետական իրավական փորձաքննական ոլորտ.

Հաշվետու ժամանակաշրջանում պետական իրավական փորձաքննության են ենթարկվել թվով 194 օրենսդրական ակտերի (27՝ ԱՀ օրենքների և 167՝ ԱՀ կառավարության որոշումների) նախագծեր (2017 թվականի առաջին կիսամյակում եղել է 155 ԼՂՀ օրենսդրական ակտեր (10 օրենքների, 142՝ ԼՂՀ կառավարության և 3՝ ԼՂՀ վարչապետի որոշումների): Ուսումնասիրվել և պետական գրանցման են ենթարկվել թվով 45 գերատեսչական նորմատիվ ակտեր (2017 թվականի առաջին կիսամյակում գրանցվել են 56 գերատեսչական նորմատիվ ակտեր, որոնցից մեկի գրանցումը մերժվել է): Պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել տեղական ինքնակառավարման մարմինների թվով 62 նորմատիվ իրավական ակտեր (2017 թվականի առաջին կիսամյակում գրանցվել են տեղական ինքնակառավարման մարմինների 63 նորմատիվ իրավական ակտեր):

Դրանց վերաբերյալ տրվել են գործող օրենսդրության պահանջներից բխող մի շարք առաջարկություններ, որոնք հիմնականում ընդունվել են:

4. Իրավական տեղեկատվական համակարգի ոլորտ

Արդյունքները: 2018 թվականի առաջին կիսամյակում ԱՀ արդարադատության նախարարությունը իրավական տեղեկատվական համակարգի ոլորտում իր առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով կազմակերպել է հետևյալ աշխատանքները.

Arlexis ծրագրում իրականացվել են՝ (այսուհետ՝ Ծրագիր)

2017 թվականի 106 օրենքների, Նախագահի 2 հրամանագրերի, կառավարության 66 որոշումների,

2018 թվականի 10 օրենքների, Նախագահի 3 հրամանագրերի, Նախագահի 2 կարգադրությունների, կառավարության 295, Գերագույն դատարանի 6 և Դատարանների նախագահների խորհրդի 4 որոշումների,

2008 թվականի 194, 2009 թվականի 195, 2010 թվականի 202 և 2011 թվականի 237 գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, վերջնական հաստատման, հաստատման, 820 կապեր այլ փաստաթղթերի հետ, ինչպես նաև 2011 թվականի 13, 2012 թվականի 168, 2013 թվականի 144, 2014 թվականի 105 և 2015 թվականի 70 գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի ներմուծման աշխատանքները:

Հանրությանը նախարարության գործունեության մասին ավելի արդյունավետ իրազեկելու նպատակով պարբերաբար թարմացրել է www.minjustnkr.am կայքը և www.facebook.com սոցիալական ցանցում նախարարության էջը:

5. Իրավական ակտերի պաշտոնական հրատարակման ոլորտ

Արդյունքները: 2018 թվականի առաջին կիսամյակում իրավական ակտերի պաշտոնական հրատարակման ոլորտում կազմակերպվել են «ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի» և «ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» պաշտոնական պարբերականների հրատարակման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել են «ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի» 12, և «ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» 6 համարներ:

Յուրաքանչյուր ամիս հրատարակվել է երկու կամ երեք պարբերական: Նախարարության կողմից ազատ կարգով իրացվել է 144 տեղեկագիր, որից ստացված 261.600 դրամ գումարը փոխանցվել է պետական բյուջե:

Տեղեկագրերում գետեղվել են ԱՀ Ազգային ժողովի կողմից ընդունված 55 օրենքներ, ԱՀ Նախագահի 2 հրամանագրեր, ԱՀ Նախագահի 1 կարգադրություն, ԱՀ կառավարության 157 որոշումներ, ԱՀ դատարանների նախագահների խորհրդի 3 որոշումներ, ԱՀ Գերագույն դատարանի 11 որոշումներ, 51 գերատեսչական նորմատիվ ակտեր և նախարարությունների ու գերատեսչությունների կողմից տրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ:

6. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման կազմակերպում

Արդյունքները: 2018 թվականի առաջին կիսամյակում ընթացքավորվել է թվով 187 հարցում՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումների պատճեններ, վկայականների կրկնօրինակներ և ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքներ ուղարկելու վերաբերյալ: Նշված հարցումներից 3-ը կատարվել է անմիջական ԱՀ ԱՆ միջոցով, իսկ 183-ը՝ ՀՀ արդարադատության և ԱՀ արտաքին գործերի նախարարությունների միջոցով: Նշված 3 հարցումներն էլ ուղարկվել են ՌԴ: Նշված 3 հարցումներն էլ ուղարկվել են ՌԴ: Տրվել է թվով 93 ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանք, որոնց դիմաց գանձվել է 82.000 դրամ պետական տուրք: Փաստորեն, հաշվետու ժամանակաշրջանում տրված ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքների թիվը նվազել է 6-ով, իսկ պետական տուրքը՝ 8.000 դրամով: Նշված տեղեկանքներից 60-ը տրվել է տղամարդկանց, իսկ 33-ը՝ կանանց:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության կենտրոնական մարմինը ընթացքավորել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող օտարերկրացիների 2 դիմում:

ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից ներկայացված քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերականգնման, անվան, հայրանվան, ազգանվան փոխման, քաղաքացիական կացության ակտերի գրանցումներում լրացման, փոփոխման և ուղղման վերաբերյալ նյութերը մանրակրկիտ ուսումնասիրվել, ստուգման են ենթարկվել, որի արդյունքում հաստատվել են թվով 72 եզրակացություններ: Նշված եզրակացություններից 8-ը վերաբերում է ակտերի գրանցման վերականգնմանը, 44-ը՝ անվան, հայրանվան, ազգանվան փոխմանը և 20-ը՝ ակտերի գրանցումներում լրացմանը, փոփոխմանը և ուղղմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել և համապատասխան ՔԿԱԳ տարածքային բաժիններ են ուղարկվել օտարերկրյա քաղաքացիների ամուսնության գրանցման թույլտվության 9 նյութեր, որոնցից՝ Ստեփանակերտի տարածքային բաժին՝ 5, Մարտունու՝ 1, Մարտակերտ՝ 1, Շուշիի՝ 1, Ասկերան՝ 1:

ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքային գործունեության մասին վիճակագրական տվյալների վերլուծությամբ պարզվել է, որ վերջիններիս կողմից 2018թ. առաջին կիսամյակում կատարվել են 2.336 քաղաքացիական կացության ակտային գրանցումներ:

Բացի այդ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մեջ կատարվել է թվով 43 ուղղում, փոփոխում և լրացում, տրվել է թվով 583 կրկնօրինակ վկայական և 483 տեղեկանք՝ ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին, ինչպես նաև կատարվել է թվով 18 ծանուցում և այլ վայրից ստացվել քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ տեղեկանքներ և վկայականների կրկնօրինակներ՝ 19:

Փաստորեն, ընդհանուր առմամբ ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից կատարվել է 3.482 գործողություն: Նշված գործողությունների դիմաց գանձվել է 4.132.000 դրամ պետական տուրք:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումների ընդհանուր քանակից 1.126-ը վերաբերվում է ծննդյան ակտային գրանցումներին:

Վիճակագրական տվյալների վերլուծությունից երևում է, որ ծննդաբերող մայրերի միջին տարիքը կազմում է 27.4 տարին:

Կատարվել են 12 զույգ երկվորյակ և 2 մեռելածին երեխաների ծննդյան ակտային գրանցում:

Ծննդյան ակտային գրանցումների ուսումնասիրությունից երևում է, որ ամենատարածված տղա երեխաների անուններն են հանդիսանում Արման, Հայկ, Դավիթ, Գոռ, Տիգրան, իսկ աղջիկ երեխաների համար՝ Աննա, Մանե, Նարե, Եվա, Մարիամ անունները:

2018թ. առաջին կիսամյակում կատարվել են 655 մահվան ակտային գրանցումներ, որից 9-ը մինչև 1 տարեկան երեխաներ:

Մահացած քաղաքացիներից 318-ը հանդիսանում են իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ 337-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ:

2018թ. առաջին կիսամյակում կատարվել են 338 ամուսնության ակտային գրանցումներ: Ամուսնացող տղամարդկանց միջին տարիքը կազմում է 29, իսկ կանանցը՝ 25 տարին:

Կատարվել է 102 ամուսնալուծության ակտային գրանցում, որոնցից 50-ը՝ համատեղ դիմումի հիման վրա, 1-ը՝ ամուսիններից մեկի դիմումի հիման վրա և 51-ը՝ դատարանի վճռի հիման վրա:

2018թ. առաջին կիսամյակում կատարված ակտային գրանցումներից 87-ը՝ վերաբերում է հայրության հաստատմանը, 19-ը՝ անվան, հայրանվան, ազգանվան, փոխմանը, 43-ը՝ ուղղմանը և 9-ը՝ ակտային գրանցումների վերականգնմանը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցումն ըստ ՔԿԱԳ տարածքային բաժինների պատկերվում է հետևյալ կերպ.

ՔԿԱԳ բաժնի անվանումը	ծնունդ	մահ	ամուսնություն	ամուսնալուծություն	որբեգրում	հայր.ձանաչում	ա.ա.հ վնասվածում	ակտի վերականգնում	ուսուրում	ստեղծվածք	կրկնորինակ	ծանուցում	այլվայրիցստ. ստեղ. նվ. կրկն.	ընդամենը	պետություն
Ստեփանակերտ	477	259	132	53	-	28	9	4	9	171	255	1	1	1.399	1.663.000
Ասկերան	111	82	30	5	-	9	1	1	8	57	45	-	-	349	321.000
Մարտակերտ	153	89	40	8	-	13	-	2	9	73	127	-	-	514	655.000
Մարտունի	167	118	41	11	-	8	1	-	7	126	54	1	1	535	602.000
Հաղրութ	71	62	32	9	-	7	3	2	6	19	57	1	-	269	383.000
Շուշի	43	17	14	3	-	4	-	-	-	18	9	-	-	108	100.000
Շահումյան	29	10	9	2	-	2	1	-	2	3	9	2	3	72	82.000
Քաշաթաղ	75	18	40	11	-	16	4	-	2	16	27	13	14	236	326.000
Ընդամենը	1.126	655	338	102	-	87	19	9	43	483	583	18	19	3.482	4.132.000

Ինչպես երևում է աղյուսակից, ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնի վրա է ընկնում գործերի 40.2 % (39.6%), ՔԿԱԳ Ասկերանի տարածքային բաժնի վրա՝ 10.0 % (9.6%) , ՔԿԱԳ Մարտակերտի տարածքային բաժնի վրա՝ 14.8 % (16.6%), ՔԿԱԳ Մարտունու տարածքային բաժնի վրա՝ 15.4% (14.1%), ՔԿԱԳ Հաղրութի տարածքային բաժնի վրա՝ 7.7% (8.7%) ՔԿԱԳ Շուշիի տարածքային բաժնի վրա՝ 3.1% (3.5%), ՔԿԱԳ Շահումյանի տարածքային բաժնի վրա՝ 2.0% (1.5%) և ՔԿԱԳ Քաշաթաղի տարածքային բաժնի վրա՝ 6.8% (6.4%) ծանրաբեռնվածությունը:

ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից 2018թ.առաջին կիսամյակում ընթացքավորվել է 458 գրություն, որից 315-ը էլեկտրոնային կառավարման նոր ծրագրով: Բացի դրանից, նշված ժամանակաշրջանում էլեկտրոնային կառավարման նոր ծրագրում թվայնացվել է 6.425ամուսնության ակտային գրանցում:

ՔԿԱԳ հանրապետական արխիվի համակարգմանն ու պահպանությանն են հանձնվել ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից գրանցված 2.416 ակտային գրանցումների երկրորդ օրինակները: Այսպիսով, 2018թ. առաջին կիսամյակում ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից հօգուտ պետական բյուջեի գանձվել է 4.132.000(3.639.000) դրամ

7. Նոտարական գործունեության կազմակերպում

Առօրյա մեթոդական և կազմակերպչական ղեկավարման է ենթարկվել նաև նոտարիատի գործունեությունը:

Կազմակերպվել է նոտարական վիճակագրության ամփոփում և պրակտիկայի ուսումնասիրություն, ԱՀ պետական նոտարների կողմից հաստատված կտակների երկրորդ օրինակների հաշվառում և պահպանում:

ԱՀ նոտարական գրասենյակների կողմից 2018թ. առաջին կիսամյակում կատարվել են 7.834 (7.543)նոտարական գործողություններ, որոնց դիմաց գանձվել է 10.558.600 (9.818.200)դրամ պետական տուրք:

Կատարված նոտարական գործողությունների ընդհանուր թվից 2.723-ը բաժին է ընկել Ստեփանակերտ թիվ 1 (3.077), 2.624-ը՝ Ստեփանակերտ թիվ 2 (2.262), 672 –ը Ասկերանի (634),

377-ը՝ Մարտակերտի (246), 681-ը՝ Մարտունու (533), 352-ը՝ Հաղրուփի (426), 158-ը՝ Շուշիի (238), 23-ը՝ Շահումյանի (26) և 224-ը՝ Քաշաթաղի (101) նոտարական գրասենյակներին:

2018թ. առաջին կիսամյակում ԱՀ նոտարական գրասենյակները կատարել են հետևյալ նոտարական գործողությունները.

• կտակների հաստատում	80
• պայմանագրերի վավերացում	1379
• այդ թվում՝	
• անշարժ գույքի օտարման պայմանագրերի վավերացում	965
• անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի վավերացում	85
• անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի վավերացում	7
• գրավի պայմանագրերի վավերացում	459
• սերվիտուտի մասին պայմանագրերի վավերացում	0
• շարժական գույքի վերաբերյալ պայմանագրերի վավերացում	5
• այլ պայմանագրերի վավերացում	313
• տրվել են սեփականության իրավունքի վկայագրեր	35
• տրվել են ժառանգության իրավունքի վկայագրեր	331
• լիազորագրերի հաստատում	1263
• փաստաթղթերի պատճենների և դրանց քաղվածքների հաստատում	763
• փաստաթղթերի թարգմանության իսկության վավերացում	1061
• փաստաթղթերի վրա եղած ստորագրության իսկության վավերացում	2428
• այլ նոտարական գործողություններ	0

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից երևում է, որ Ստեփանակերտի թիվ 1 նոտարական գրասենյակի վրա է ընկնում գործերի ծանրաբեռնվածության 34.8%-ը (40.8%), Ստեփանակերտի թիվ 2 նոտարական գրասենյակի վրա՝ 33.5%-ը (30.0%), Ասկերանի շրջանի նոտարական գրասենյակի վրա՝ 8.6%-ը (8.4%), Մարտակերտի շրջանի նոտարական գրասենյակի վրա՝ 4.8%-ը (3.3%), Մարտունու շրջանի նոտարական գրասենյակի վրա՝ 8.7%-ը (7.1%), Հաղրուփի շրջանի նոտարական գրասենյակի վրա՝ 4.5%-ը (5.6%), Շուշիի շրջանի նոտարական գրասենյակի վրա՝ 2.0%-ը (3.2%), Շահումյանի շրջանի նոտարական գրասենյակի վրա՝ 0.3%-ը (0.3%) և Քաշաթաղի շրջանի նոտարական գրասենյակի վրա՝ 2.8%-ը (1.3%):

Այսպես, 2018թ. առաջին կիսամյակում ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կողմից հօգուտ պետական բյուջեի գանձվել է 14.772.600 դրամ պետական տուրք, այդ թվում՝

ա/ նոտարական գրասենյակների կողմից – 10.558.600 դրամ,

բ/ ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից – 4.132.000 դրամ,

գ/ ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի կողմից - 82.000 դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության կողմից արտաբյուջե մտցվել է 5.545.000 որից՝

ա/ նոտարական գրասենյակների կողմից – 4.555.000 դրամ,

բ/ ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի և ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից – 990.000 դրամ:

8. Պետական ռեզիստրի գործունեության կազմակերպում

Արդյունքները: 2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում շարունակվել է գործունեությունը ԱՀ տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական հաշվառման ուղղությամբ:

Միստեմատիկ հսկողություն է իրականացվել պետռեզիստրի տարածքային բաժինների նկատմամբ, նրանց տրվել են ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և

մեթոդական ցուցումներ: Գործակալության կողմից ընթացքավորվել են մի շարք գրություններ և հարցումներ, որոնց առթիվ տրվել են սպառիչ պատասխաններ: Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել իրավաբանական պարզաբանումներ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 99 առևտրային և 14 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 181-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 10-ի գործունեությունը դադարեցվել է: 4 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում և 1 հիմնարկի առանձնացված ստորաբաժանում վերցվել են պետական հաշվառման, 7 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում՝ հանվել հաշվառումից: 14 հիմնարկ և 2 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման: Պետական հաշվառման են ենթարկվել նաև 448 անհատ ձեռնարկատեր, 70-ը՝ ստացել ընթացիկ պետական հաշվառում, իսկ 24-ի գործունեությունը դադարեցվել է:

Ըստ շրջանների պետական գրանցման /հաշվառման/ գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադար		
<i>Գենտրոնական մարմին</i>	13	27	4դ	1	1	1				47	316
<i>Ստեփանակերտ</i>	76	106	4	2	8	6	222	50	21	495	2721
<i>Ասկերան</i>	4	10	2		2		45	5		68	270,5
<i>Հաղրութ</i>	4	10			1		34			49	235
<i>Մարտակերտ</i>	5	6					64	4	1	80	317
<i>Մարտունի</i>	2	10					55	6	1	74	267
<i>Շուշի</i>	6	2			1		12	2	1	24	158
<i>Քաջաթաղ</i>	3	10		2	3		16	3		37	199,5
Ընդամենը	113	181	6/4դ	5	16	7	448	70	24	874	4484

ԱՀ Նախագահի 2017-2020թթ. ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 179 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Պետական միասնական գրանցամատյանից տրվել են 280 տեղեկանքներ:

Վերը նշված պետական գրանցումների ու հաշվառումների դիմաց գանձվել է 5.364.000 դրամ պետական տուրք:

Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է հատուկ թույլտվություն պահանջող ֆիրմային անվանումների օգտագործմամբ պայմանավորված 6.000.000 դրամ տարեկան պետական տուրք և 2 իրավաբանական անձի տարեկան պետական տուրքի պարտավորության ժամանակին չկատարմամբ պայմանավորված 3.600 դրամ հաշվարկված տույժ, որի հաշվակցմամբ հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 11.367.600 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում արտաբյուջե է մտցվել 690.000 դրամ:

9. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտ

Արդյունքները: ԱՀ ԱՆ ԴԱՀԿԱ ծառայության կողմից 2018թ. 1-ին կիսամյակում ծավալած գործունեության մասին.

2018 թվականի առաջին կիսամյակում ԴԱՀԿԱ ծառայության աշխատակիցների կողմից հարուցվել են 5348 կատարողական վարույթներ՝ նախորդ կիսամյակում մնացած 2122-ի հետ կազմելով 7470: Նշված կատարողական վարույթներից փաստացի կատարման հիմքով կարճվել են 2101-ը, ավարտվել՝ 2301-ը: Անավարտ կատարողական վարույթների մնացորդը կազմում է 3068:

Բոլոր կատարողական վարույթներով բռնագանձված արժեքների ընդհանուր գումարը կազմել է 576.468.759 դրամ, այդ թվում՝ պետության օգտին՝ 26.533.500 դրամ, ֆիզիկական անձանց օգտին 21.785.550 դրամ, իրավաբանական անձանց օգտին՝ 528.149.709 դրամ:

2018թ. 1-ին կիսամյակում ԴԱՀԿ ծառայության կողմից որոշակի աշխատանք է կատարվել ճյուղի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Գործուն և սիստեմատիկ բնույթ է կրել ստորաբաժանումների գործունեության նկատմամբ տարվող հսկողությունը, դրա կազմակերպչական և մեթոդական կառավարումը, կատարվել են բազմիցս ստուգումներ և պրակտիկ օգնություն է ցուցաբերվել, վեր հանված թերությունները և բացթողումները տեղերում շտկվել են:

2018թ. 1-ին կիսամյակում ծառայության կողմից իրականացված գործունեության արդյունքները օպերատիվ խորհրդակցությունում կքննարկվեն և կկիրառվեն բոլոր հնարավոր միջոցները՝ ուղղված աշխատակիցների պատասխանատվության բարձրացմանը, խախտումները բացատրելու և բռնագանձման գործընթացը էլ ավելի բարելավելու համար:

10. Դատական փորձաքննությունների լաբորատորիա

Արդյունքները: 2018 թվականի առաջին կիսամյակում դատական փորձաքննությունների լաբորատորիան պլանային և նպատակաուղղված գործունեություն է ծավալել: Աշխատանքներ են տարվել լաբորատորիայի հնարավորությունների ընդլայնման և կանոնադրական գործառույթների արդյունավետ իրականացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում փորձաքննությունների կատարման համար դատական փորձաքննությունների լաբորատորիայում գրանցվել են 274 մուտքեր, այդ թվում նախորդ տարվանից փոխանցված 93 մուտքերը:

Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայում գրանցված 274 մուտքերից կատարմամբ ավարտվել են 178-ը, որոնցով ըստ փորձաքննության տեսակների անցկացվել է 194 փորձաքննություններ:

Փորձաքննությունների կատարման ծառայությունների մատուցման գծով, ըստ նախաձեռնողների թվով 274 մուտքերի բաշխվածության պատկերը հետևյալն է՝

1. ԱՀ ոստիկանության մարմիններ	-52
2. ԱՀ դատախազության մարմիններ	-2
3. ԱՀ դատարաններ	-80
4. ԱՀ ԿԱ ԱԻ ՓԾ	-57
5. ԱՀ ԱՆ ԴԱՀԿԱԾ	-68
6. ԱՀ ֆինանսների նախարարություն ՔԲ	-1
7. Այլ մուտքեր (պայմանագրային՝ ֆիզ. և իր. անձանց կողմից)	-14

Դատական փորձաքննությունների լաբորատորիայի փորձագետները հաշվետու ժամանակահատվածում հետազոտել են 498 օբյեկտներ:

Դատական նիստերին և հարցաքննության փորձագետները մասնակցել են 11 անգամ:

Հաշվետու ժամանակահատվածում փորձագետի լուծմանը առաջադրվել է 390 հարց, որից լուծում չի ստացել 19-ը, այդ թվում՝ նյութերի անբավարարության կամ հետազոտության օբյեկտը

չտրամադրելու, երաշխավորված մեթոդիկայի կամ անհրաժեշտ վերլուծական սարքի բացակայության պատճառով:

Փորձագետի լուծմանը առաջադրված հարցերից 347 հարցերի տրվել է միանշանակ, 7-ին՝ պայմանական միանշանակ, իսկ 17-ին՝ հավանական պատասխան:

11. ԼՂՀ պետական արխիվ

Արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում մեծ աշխատանք է տարվել փաստաթղթերի հաշվառումը և օգտագործումը կատարելագործելու ուղղությամբ:

2018 թվականի առաջին կիսամյակում հաշվառման է վերցվել 936 ֆոնդ: Հիմնարկ-ձեռնարկություններից և կազմակերպություններից ընդունվել են մշտական պահպանման 2800 գործ, անձնական կազմի 688 գործ, ժամանակավոր 70 գործ, երկարաժամկետ 212 գործ, իսկ ոչնչացման 3177 գործ:

ԱՀ տարբեր շրջաններում բնակվող քաղաքացիներից ընդունվել է սոցիալ-իրավական բնույթի 636 դիմում, որոնց ժամանակին և օբյեկտիվորեն տրվել են համապատասխան արխիվային տեղեկանքներ:

Կիսամյակի ընթացքում կատարվել կամ իրագործվել է 396 հարցապնդում:

Թվայնացվել է 42.230 թերթ:

Կազմավերականգնողական լաբորատորիայում վերականգնվել և վերանորոգվել է 973 թերթ, կարվել է 1698 և կազմապատվել՝ 135 գործ:

Հաշվետու ժամանակահատվածում անց են կացվել փորձագիտական հանձնաժողովի 2 նիստ, որտեղ քննարկվել և հաստատվել են 51 ցուցակներ՝ 841 պահպանվող միավորների ընդհանուր քանակով:

2018 թվականի առաջին կիսամյակում «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ-ը հիմնարկ-ձեռնարկությունների գործավարությունում առաջացած արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու համար նրանց հետ կնքել է 11 պայմանագիր:

Պահոցների մշտական խնամքը միշտ եղել է ուշադրության կենտրոնում:

Փոխվել են «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ-ի շենքի բոլոր դռները:

ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ